



## Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

### Քննական առարկա 6

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

#### Քննաթերթ

	Թեմա	Միավոր
Հարց 1	Համախմբված ֆինանսական հաշվետվություններ- ՖՀՄՍ 10	20
Հարց 2	Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն և մեկնաբանում	20
Հարց 3	Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում. շահույթ/վնասի և այլ համապարփակ արդյունքի մասին հաշվետվություն և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն - ՀՀՄՍ 1, 1 բաժնետոմսի բաժին ընկնող շահույթ- ՀՀՄՍ 33	20
Հարց 4	Բազմակի ընտրության հարցեր- ՀՀՄՍ 16, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 10, ՀՀՄՍ 20, ՀՀՄՍ 12	20
Հարց 5	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն - ՀՀՄՍ 7	20
Ընդամենը		100

## Հարց 1.

2025թ. հուլիսի 1-ին «Մայամի» ՓԲԸ-ն 200 մլն դրամ կանխիկ վճարմամբ ձեռք է բերել «Դալլաս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի 80%-ը:

«Մայամի» ՓԲԸ-ի և «Դալլաս» ՓԲԸ-ի անհատական ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները 31.12.2025թ. դրությամբ ներկայացված են ստորև.

Հազ. դրամ	Մայամի	Դալլաս
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		
Հիմնական միջոցներ	430,000	174,000
Ներդրումներ	594,000	22,000
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		
Պաշարներ	122,600	45,000
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	74,200	31,200
Դրամական միջոցներ	2,600	18,400
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>1,223,400</b>	<b>290,600</b>
<b>Սեփական կապիտալ</b>		
Կանոնադրական կապիտալ (սովորական բաժնետոմսեր՝ 1 դրամ անվանական արժեքով)	540,000	80,000
Զբաղիված շահույթ	428,600	163,400
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		
Վարկեր	156,000	10,600
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	98,800	36,600
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>	<b>1,223,400</b>	<b>290,600</b>

Միաժամանակ հայտնի է հետևյալ տեղեկատվությունը.

1. «Դալլաս» ՓԲԸ-ի զուտ ակտիվների իրական արժեքը հավասար էր դրանց հաշվեկշռային արժեքին, բացառությամբ գլխամասային գրասենյակի շենքի: Վերջինիս իրական արժեքը գերազանցում էր հաշվեկշռային արժեքը 24 մլն դրամով: Ձեռք բերման ամսաթվի դրությամբ շենքի մնացորդային օգտակար ծառայության ժամկետը կազմում էր տասը տարի:

2. 2025թ. հուլիսի 1-ին «Մայամի» ՓԲԸ-ն ձեռք է բերել նաև «Բոստոն» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի 40%-ը: «Մայամի» ՓԲԸ-ն կանխիկ վճարել է 60 մլն դրամ: Բացի այդ, «Մայամի» ՓԲԸ-ն «Բոստոն» ՓԲԸ-ի նախկին սեփականատերերին տրամադրել է «Մայամի» ՓԲԸ-ի 30 մլն բաժնետոմս, որոնց շուկայական արժեքը 2025թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 4.60 դրամ յուրաքանչյուրի դիմաց: «Մայամի» ՓԲԸ-ն արձանագրել է միայն կանխիկ հատուցումը:
3. «Դալլաս» ՓԲԸ-ն 31.12.2025թ. ավարտվող տարվա համար կրել է 20 մլն դրամ վնաս, իսկ «Բոստոն» ՓԲԸ-ն նույն ժամանակաշրջանի համար ստացել է 12 մլն դրամ շահույթ: Տարվա ընթացքում շահույթը ձևավորվել է հավասարաչափ:
4. «Մայամի» ՓԲԸ-ն և «Դալլաս» ՓԲԸ-ն ունեն ներդրումներ բաժնային ֆինանսական գործիքներում: Ընկերություններից որևէ մեկը այդ ներդրումները չեն դասակարգել՝ որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող: 31.12.2025թ. դրությամբ այդ ներդրումների արժեքն աճել է համապատասխանաբար 30 մլն և 6 մլն դրամով, սակայն ոչ մի ճշգրտում չի կատարվել: Նշված աճը գրանցվել է ձեռքբերումից հետո:
5. «Դալլաս» ՓԲԸ-ն և «Բոստոն» ՓԲԸ-ն երկար տարիներ ապրանքներ են վաճառել «Մայամի» ՓԲԸ-ին: 31.12.2025թ. դրությամբ Խմբի ներսում այդ ապրանքների գծով մնացորդ չի եղել: «Մայամի» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված է 10 մլն դրամ կրեդիտորական պարտք «Դալլաս» ՓԲԸ-ի հանդեպ: Այս գումարը չի համապատասխանում «Դալլաս» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված դեբիտորական պարտքի գումարին, քանի որ 2025թ. դեկտեմբերի 30-ին «Մայամի» ՓԲԸ-ն 4 մլն դրամի վճարում է կատարել:
6. «Մայամի» ՓԲԸ-ն չվերահսկվող բաժնեմասը չափում է իրական արժեքով: 2025թ. հուլիսի 1-ի դրությամբ վերջինիս իրական արժեքը կազմել է 58 մլն դրամ:

**Պահանջվում է.**

**ա) Կազմել «Մայամի» Խմբի համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 31.12.2025թ. դրությամբ:**

*(18 միավոր)*

**բ) Բացատրել ներխմբային մնացորդների և չիրացված շահույթների բացառման անհրաժեշտությունը՝ կապված մայր ընկերությունից դուստր ընկերությանը կապարված վաճառքների հետ:**

*(2 միավոր)*

*(Ընդամենը 20 միավոր)*

## Հարց 2.

Ֆեռարի սպորտն ու Սպորտամանը գործունեություն են ծավալում սպորտային հագուստի ոլորտում: Հետևյալ քաղվածքները վերաբերում են ընկերությունների նախնական ֆինանսական հաշվետվություններին 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ՇԱՀՈՒՅԹԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ  
2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազ. դրամ	Ֆեռարի սպորտ	Սպորտաման
Հասույթ	500,000	440,000
Վաճառքի ինքնարժեք	(380,000)	(300,000)
<b>Համախառն շահույթ</b>	<b>120,000</b>	<b>140,000</b>
Օտարումից օգուտ (հղ. (3))	10,000	-
Գործառնական ծախսեր	(80,000)	(76,000)
<b>Գործառնական շահույթ</b>	<b>50,000</b>	<b>64,000</b>
Ֆինանսական ծախսեր	(15,000)	(2,000)
<b>Շահույթ մինչև հարկումը</b>	<b>35,000</b>	<b>62,000</b>

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ  
2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազ. դրամ	Ֆեռարի սպորտ	Սպորտաման
Դրամական միջոցներ	10,000	20,000
Ընդամենը սեփական կապիտալ	180,000	120,000
Ոչ ընթացիկ պարտավորություններ	90,000	30,000
Առևտրային կրեդիտորական պարտքեր	70,000	24,000

**Առկա է հետևյալ տեղեկատվությունը.**

1) Ֆեռարի սպորտը բարձր դասի բրենդային սպորտային հագուստի արտադրող և վաճառող ընկերություն է, որը վաճառում է առցանց և իր սեփական միջազգային բրենդային խանութների ցանցում:

2) Սպորտամանը միջին դասի շուկայական սպորտային հագուստ է վաճառում տեղական վաճառասրահներում և առցանց: Այն իր ապրանքները ստանում է ուղղակիորեն արտադրողից և միջազգային վաճառքներ չի իրականացնում: Սպորտամանը պլանավորում է դուրս գալ միջազգային շուկա հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում:

3) 2025 թվականի դեկտեմբերի 31-ին Ֆեռարի սպորտը վաճառել է Աուդի սպորտ ընկերության մեջ իր ներդրումը՝ 20 մլն դրամով: Ստացվելիք դրամական միջոցները արտացոլված են դեբիտորական պարտքերի կազմում հաշվետու ամսաթվի դրությամբ, իսկ օտարումից օգուտը ներառված է շահույթի և այլ համապարփակ արդյունքի հաշվետվության մեջ: Աուդի սպորտ ընկերությունն ուներ հետևյալ ցուցանիշները 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

- Համախառն շահույթի մարժա — 40%
- Գործառնական շահույթի մարժա — 5%

4) Ֆեռարի սպորտը իր կողմից Աուդի սպորտ ընկերությանը մատուցվող ծառայությունների դիմաց ամսական 200,000 դրամ եկամուտ է ստացել, որը նվազեցվել է գործառնական ծախսերից:

**Պահանջվում է.**

**ա) Օգտագործելով տրամադրված ֆինանսական հաշվետվությունների քաղվածքները՝ հաշվարկել հետևյալ ցուցանիշները և՛ Ֆեռարի սպորտի, և՛ Սպորտամանի համար.**

- Համախառն շահույթի մարժա
- Գործառնական շահույթի մարժա
- Կրեդիտորական պարտքի օրեր
- Գործարկված կապիտալի շահութաբերությունը
- Ֆինանսական լծակը

(6 միավոր)

**բ) Մեկնաբանել երկու ընկերությունների ֆինանսական վիճակն ու արդյունքները 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:**

(14 միավոր)

(Ընդամենը 20 միավոր)

### Հարց 3.

Ստորև ներկայացված է «Վիենա» ՓԲԸ-ի փորձնական հաշվեկշռի քաղվածքը 31.10.2025թ. դրությամբ.

ՀՀ դրամ	Դերետ	Կրեդիտ
Հող — հաշվ. արժ. 31.10.2025թ.	1,600,000	
Շենքեր — հաշվ. արժ. 31.10.2025թ.	952,000	
Ներդրումներ — ԻԱՇՎ չափվող	356,800	
Ներդրումներ — ԻԱԱՀԱ չափվող	240,000	
Կանոնադրական կապիտալ 01.11.2024թ. դրությամբ		1,800,000
Էմիսիոն եկամուտ 01.11.2024թ. դրությամբ		1,000,000
Վերագնահ. պահուստ (Ներդրումների գծով) 01.11.2024թ.		65,028
Զբաղիված շահույթ 01.11.2024թ.		873,214
Հասույթ		7,531,010
Վաճառքի ինքնարժեք	4,893,154	
Իրացման ծախսեր	232,332	
Վարչական ծախսեր	255,426	
Այլ եկամուտ		30,302
Շահութահարկի գծով ծախս 31.10.2025թ համար	856,000	

Միաժամանակ հայտնի է հետևյալ տեղեկատվությունը.

- 2025թ. հոկտեմբերին «Վիենա» ՓԲԸ-ն ստացել է 700 հազար դրամ մեկ հաճախորդից սպասարկման ծառայությունների դիմաց: Այդ գումարը գրանցվել է որպես հասույթ: «Վիենա» ՓԲԸ-ն ինքնուրույնաբար չի մատուցում ծառայությունը, այլ հանդիսանում է միջնորդ երրորդ կողմի և հաճախորդի միջև: Վիենա» ՓԲԸ-ն իր օգտին գանձում է ստացված գումարի 12%-ը՝ որպես միջնորդավճար, իսկ մնացորդային գումարը փոխանցում է երրորդ կողմին:
- Տարեվերջյան պաշարների գույքագրումը իրականացվել է հաշվետու ամսաթվից մեկ օր առաջ՝ 30.10.2025թ.: 31.10.2025թ. «Վիենա» ՓԲԸ-ն իրականացրել է 24,070 դրամի վաճառք, որը չի արտացոլվել հաշվեկշռում, քանի որ փորձնական հաշվեկշիռն արդեն ձևավորված էր: «Վիենա» ՓԲԸ-ն կիրառում է 30% հավելագին այդ ապրանքների համար:
- Հաշվետու տարվա ընթացքում իրական արժեքով շահույթ/վնասի միջոցով չափվող 124,000 դրամ հաշվեկշռային արժեքով ներդրումները վաճառվել են 118,000 դրամով: Օտարումից ստացված օգուտ/վնասը հանվել է ներդրումների հաշվեկշռային արժեքից, այնինչ օտարումից օգուտ/վնասը պետք է հաշվառվի վարչական ծախսերի կազմում՝ համաձայն ընկերության որդեգրած հաշվապահական հաշվառման քաղաքականության: Մնացած ներդրումների իրական արժեքը կազմում էր 368,600 դրամ հաշվետու ամսաթվի դրությամբ,

ինչը սակայն չի հաշվառվել: Համապատասխան օգուտը կամ վնասը ենթակա է ճանաչման «Այլ եկամուտներ» հոդվածի ներքո:

4. Իրական արժեքով այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրական արժեքը ներառում է տարվա ընթացքում ձեռք բերված ներդրումների արժեքը: Այդ ձեռք բերման հետ առնչվող ծախսերը 16,000 դրամի չափով ճանաչվել են վարչական ծախսերի կազմում: 31.10.2025թ. իրական արժեքով այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրական արժեքը կազմում էր 249,500 դրամ, որը դեռ պետք է ճանաչվի այլ համապարփակ արդյունքի կազմում:
5. «Վիենա» ՓԲԸ-ն առաջին անգամ որոշել է հողն ու շենքը հաշվառել իրական արժեքով: 31.10.2025թ. հողի իրական արժեքը կազմում էր 2,000,000 դրամ, իսկ շենքերին՝ 1,400,000 դրամ: Վերագնահատման և հետաձգված հարկի արդյունքը դեռևս չի ճանաչվել: Համապատասխան հարկի դրույքաչափը կազմում է 21%:
6. 01.11.2024թ.-ի դրությամբ կանոնադրական կապիտալը բաղկացած էր 3,600,000 հատ 0.50 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից: 01.02.2025թ. «Վիենա» ՓԲԸ-ն իրականացրել է ռայթերի թողարկում՝ 1-ը 5 հատ բաժնետոմսի դիմաց՝ յուրաքանչյուրը 1 դրամ արժեքով: Մինչ ռայթերի թողարկումը բաժնետոմսերի իրական արժեքը կազմում էր 3.2 դրամ: Ռայթերի թողարկումը չի հաշվառվել:
7. «Վիենա» ՓԲԸ-ն 31.10.2024թ. բացահայտել է 1 բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ՝ 0.4 դրամ:

01.09.2025թ. ընկերությունը հայտարարել է շահաբաժիններ 0.20 դրամ բոլոր բաժնետոմսերի դիմաց: Շահաբաժինը վճարվել է 30.09.2025թ. և ճանաչվել «Տարանցիկ հաշվում»:

*Պահանջվում է.*

*ա) Կազմել «Վիենա» ՓԲԸ-ի շահույթ/վնասի և այլ համապարփակ արդյունքի մասին հաշվետվությունը 31.10.2025թ. ավարտվող տարվա համար: (12 միավոր)*

*բ) Կազմել «Վիենա» ՓԲԸ-ի սեփական կապիտալի շարժի մասին հաշվետվությունը 31.10.2025թ. ավարտվող տարվա համար: (5 միավոր)*

*գ) Վերաներկայացնել 31.10.2024թ 1 բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը՝ հաշվի առնելով հաշվետու տարվա ռայթերի թողարկումը: (3 միավոր)*

*( Ընդամենը 20 միավոր)*

**Հարց 4.**

1. Հետևյալ փորձնական հաշվեկշռի քաղվածքը վերաբերում է «Տրդատ» ՍՊԸ-ին 2026թ. ապրիլի 30-ի դրությամբ.

Հազ. դրամ	<b>Դեբետ Կրեդիտ</b>
Հող՝ ինքնարժեքով	1,600
Շենք՝	
Իրական արժեք 2022թ. մայիսի 1-ին	3,000
Կուտակված մաշվածություն 2025թ. ապրիլի 30-ի դրությամբ	180
Վերագնահատման պահուստ 2025թ. ապրիլի 30-ի դրությամբ	1,410

2022թ. մայիսի 1-ին, երբ շենքի հաշվեկշռային արժեքը 1,500,000 դրամ էր, այն առաջին անգամ վերագնահատվեց մինչև 3 մլն դրամ, իսկ մնացորդային օգտակար ծառայությունը այդ ամսաթվին գնահատվեց 50 տարի: «Տրդատ» ՍՊԸ-ն վերոնշյալ փորձնական հաշվեկշռում ճիշտ է հաշվառել այս վերագնահատումը:

«Տրդատ» ՍՊԸ-ն դեռևս չի հաշվարկել մաշվածությունը 2026թ. ապրիլի 30-ին ավարտվող տարվա համար և հավելյալ մաշվածության չափով վերագնահատման պահուստից չբաշխված շահույթին մասհանուհի չի կատարել 2026թ. ապրիլի 30-ի դրությամբ:

2026թ. փետրվարին հողը (բայց ոչ շենքը) անկախ գնահատողի կողմից գնահատվել է 1,900,000 դրամ: Այս ճշգրտումը դեռևս չի կատարվել 2026թ. ապրիլի 30-ին ավարտվող տարվա համար:

**Որքա՞ն է «Տրդատ» ՍՊԸ-ի վերագնահատման պահուստի մնացորդը 2026թ. ապրիլի 30-ի դրությամբ՝ անհրաժեշտ ճշգրտումները կատարելուց հետո:**

- ա. 1,110,000 դրամ
- բ. 690,000 դրամ
- գ. 1,680,000 դրամ
- դ. 1,741,200 դրամ

*(2 միավոր)*

2. 2025թ. հունվարի 1-ին «Պլուտոն» ՍՊԸ-ն թողարկել է 1,000,000 դրամ անվանական արժեքով 6% արժեկտրոնային դրույքով պարտատոմսեր: Պարտատոմսերը թողարկվել են 100,000 դրամ զեղչով, իսկ թողարկման հետ կապված ուղղակի ծախսերը կազմել են 20,000 դրամ: Պարտատոմսերը հետգնվելու են 2029թ. դեկտեմբերի 31-ին զգալի հավելավճարով: Արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10%:

**Որքա՞ն կլինի պարտավորության հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ամորտիզացված արժեքով):**

- ա. 908,000
- բ. 940,000
- գ. 880,000
- դ. 1,028,000

(2 միավոր)

3. ՖՀՄՍ15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ստանդարտը սահմանում է, որ այն դեպքերում, երբ կատարման պարտականությունները բավարարվում են ժամանակի ընթացքում, կազմակերպությունները պետք է կիրառեն կատարման առաջընթացի չափման համապատասխան մեթոդ:

**Հետևյալներից որ երկուսը կարող են ընդունելի լինել կատարման առաջընթացի չափման համար:**

- ա. Պայմանագրի գծով մինչ օրս կատարված ընդհանուր ծախսերը՝ որպես պայմանագրից ստացման ենթակա ընդհանուր հասույթի տոկոս
- բ. Ավարտված փուլերը՝ որպես ֆիզիկական ավարտվածության տոկոս
- գ. Մինչ օրս ավարտված կատարման պարտականության ուսումնասիրությունը՝ որպես պայմանագրից ստացման ենթակա ընդհանուր հասույթի տոկոս
- դ. Ծախսված աշխատաժամանակը՝ որպես ընդհանուր ակնկալվող աշխատաժամանակի տոկոս

(2 միավոր)

4. «Զիջիլ» ընկերությունը կապակցվածություն ունի մի շարք այլ ընկերությունների հետ:

**Թվարկվածներից ո՞րի դեպքում է, որ «Զիջիլ»-ը աներկբա հանդես է գալիս՝ որպես մայր կազմակերպություն:**

- i) «Ֆրիկ» ընկերությունն ունի ձայնի իրավունք չտվող 100,000 հատ և 200,000 հատ ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր, որոնցից յուրաքանչյուրի գծով շահաբաժինները միմյանց հավասար են: «Զիջիլ»-ին են պատկանում «Ֆրիկ»-ի բոլոր ձայնի իրավունք չտվող բաժնետոմսերը և ձայնի իրավունք տվող 80,000 բաժնետոմսեր
- ii) «Կարաս» ընկերությունն ունի 2 մլն հատ բաժնետոմսեր, որոնցից 40% պատկանում է «Զիջիլ» ընկերությանը: «Զիջիլ»-ին են պատկանում նաև «Կարաս»-ի 1,000,000 դրամի փոխարկելի պարտատոմսեր: Այս պարտատոմսերից կարող են փոխարկվել բաժնետոմսերի հետևյալ պայմաններով՝ յուրաքանչյուր 200 դրամ պարտատոմսի դիմաց 80 սովորական բաժնետոմս կամ ներդրողի հայեցողությամբ կարող են ներկայացվել մարման դրամական միջոցների դիմաց
- iii) «Զիջիլ» ընկերությանն են պատկանում «Պետրոս» ընկերության սովորական բաժնետոմսերի 48%ը և մարում չենթադրող արտոնյալ բաժնետոմսերի 55%ը: Այս ներդրումների արդյունքում «Զիջիլ»-ը «Պետրոս» ընկերությունից ստանում է փոփոխուն հատույց և իր իշխանությամբ կարողանում է ներազդել «Պետրոս»-ի հատույցների վրա:

- ա) միայն (i)
- բ) միայն (i) և (ii)
- գ) միայն (ii) և (iii)
- դ) բոլորի դեպքում

(2 միավոր)

5. ՀՀՄՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում»-ին վերաբերող ո՞ր պնդումներն են ճիշտ:

i) Ակտիվի ձեռքբերմանը վերաբերող պետական շնորհը պետք է նվազեցվի ակտիվի հաշվեկշռային արժեքից ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ

ii) Ակտիվի ձեռքբերմանը վերաբերող պետական շնորհը կարող է ճանաչվել շահույթ/վնասի կազմում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում

iii) Պետական մարմնից ստացված անվճար խորհրդատվական ծառայությունը պետական շնորհ չի համարվում

iv) Նախորդ ժամանակաշրջաններում ստացված շնորհի վերադարձը համարվում է՝ որպես նախորդ ժամանակաշրջանի սխալի ուղղում

ա) (i) և (ii)

բ) (ii) և (iii)

գ) (ii) և (iv)

դ) (iii) և (iv)

*(2 միավոր)*

6-10 հարցերը վերաբերում են հետևյալ իրավիճակին.

«Սատուռն» ՍՊԸ-ն պատրաստում է իր ֆինանսական հաշվետվությունները 2025թ. սեպտեմբերի 30-ին ավարտվող տարվա համար: Առկա է հետևյալ տեղեկատվությունը.

### 1. Ֆինանսական ակտիվներ

**Բաժնետոմսեր «Ա»** — Մեկ այլ ընկերության 20,000 հատ բաժնետոմսեր, որոնք իրենցից ներկայացնում են երկարաժամկետ ներդրում և սկզբնական ճանաչման պահին անշրջելի ընտրություն է կատարվել ներդրումները չափել իրական արժեքով այլ համապարփակ արդյունքի միջոցով: Այս բաժնետոմսերը ձեռք են բերվել 2024 թ. հոկտեմբերի 1-ին՝ մեկ բաժնետոմսի դիմաց 7 դրամ արժեքով: Ձեռք բերման ժամանակ կատարվել են գործարքային ծախսեր՝ ձեռք բերման գնի 1%-ի չափով: 2025 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս բաժնետոմսերի իրական արժեքը կազմում է 9 դրամ մեկ բաժնետոմսի համար:

### 2. Հարկեր

Փորձնական հաշվեկշռում ընթացիկ հարկերի գծով առկա է 4.8 մլն դրամ դեբետային մնացորդ, որն իրենից ներկայացնում է 2024 թ. սեպտեմբերի 30-ին ավարտվող տարվա հարկային պարտավորության ավել/պակաս հաշվառումը: 2025 թ. սեպտեմբերի 30-ին ավարտվող տարվա շահութահարկը գնահատվել է 56 մլն դրամ: Հետաձգված հարկային հաշվին առկա կրեդիտային մնացորդը 5.0 մլն դրամ է, սակայն 2025 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ համապատասխան պարտավորությունը կազմում է 8.8 մլն դրամ:

### 3. Հասույթ

2024 թ. հոկտեմբերի 1-ին «Սատուռն» ՍՊԸ-ն վաճառել է իր ապրանքներից մեկը 20 մլն դրամով: Վաճառքի պայմանագրի համաձայն՝ «Սատուռն» ՍՊԸ-ն պարտավորվում է ապրանքի շարունակական սպասարկում իրականացնել մինչև 2027 թ. սեպտեմբերի 30-

ը (այսինքն՝ վաճառքի ամսաթվից երեք տարի): Սպասարկման արժեքն ընդգրկված է 20 մլն դրամ վաճառքի գնում: «Սատուռն» ՍՊԸ-ի սպասարկման գնահատվող ծախսը կազմում է 1,200,000 դրամ տարեկան, իսկ այդ տեսակի սպասարկման համախառն շահույթի մարժան կազմում է 25%: Ձեռչումն անտեսել:

6. Ներքոնշյալից ո՞ր սահմանումն է համապատասխանում ֆինանսական ակտիվի սահմանմանը ՖՀՄԱ-երի համաձայն.

i) Այլ կազմակերպության բաժնային գործիքը

ii) Պայմանագրային իրավունք է այլ կազմակերպության հետ, իր համար պոտենցիալ նպաստավոր պայմաններով, ֆինանսական գործիքներ փոխանակելու

iii) Պայմանագրային իրավունք է այլ կազմակերպության հետ, իր համար պոտենցիալ անբարենպաստ պայմաններով, ֆինանսական գործիքներ փոխանակելու

iv) Դրամական միջոցը

ա) (i) և (ii)

բ) (i) , (ii) և (iv)

գ) (i) , (iii) և (iv)

դ) միայն (iv)

*(2 միավոր)*

7. «Սատուռն» ՍՊԸ-ի ֆինանսական ակտիվների վերաբերյալ՝ 2025 թ. սեպտեմբերի 30-ին ավարտվող տարվա այլ համապարփակ արդյունքի կազմում որքա՞ն գումար կճանաչվի.

ա) 38,600

բ) 42,600

գ) 40,000

դ) 0 (Ձրո)

*(2 միավոր)*

8. 2025 թ. սեպտեմբերի 30-ին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի մասին հաշվետվության շահութահարկի ծախս/փոխհատուցում հոդվածի ներքո որքա՞ն գումար կճանաչվի.

ա) 56,000,000

բ) 60,800,000

գ) 64,600,000

դ) 59,800,000

*(2 միավոր)*

9. «Սատուռն» ՍՊԸ-ն 2025 թ. սեպտեմբերի 30-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որքա՞ն հետաձգված եկամուտ պետք է ճանաչի՝ ապրանքի մատակարարման և սպասարկման պայմանագրի հետ կապված.

- ա) 2,400,000
- բ) 3,200,000
- գ) 1,200,000
- դ) 3,000,000

*(2 միավոր)*

10. Ո՞ր պնդումներն են ճիշտ «Սատուոն» ՍՊԸ-ի 2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հետաձգված եկամտի վերաբերյալ.

(i) Հետաձգված եկամուտը «Սատուոն» ՍՊԸ-ի 2025 թ. սեպտեմբերի 30-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ կներկայացվի ընթացիկ և ոչ-ընթացիկ պարտավորությունների միջև հավասարաչափ

(ii) «Սատուոն» ՍՊԸ-ի հետաձգված եկամտի հետ կապված ծախսերը պետք է ճանաչվեն շահույթ/վնասի մասին հաշվետվությունում եկամտի ճանաչման հետ միաժամանակ

(iii) Հետաձգված եկամուտը կարող է ճանաչվել որպես հասույթ բացառապես հաճախորդի հետ ծառայությունների մատուցման գրավոր պայմանագրի առկայության դեպքում

(iv) «Սատուոն» ՍՊԸ-ի սպասարկման գծով հասույթը ճանաչելիս ավարտվածության աստիճանը կարևոր չէ

- ա) (i) և (ii)
- բ) (iii) և (iv)
- գ) (ii) և (iii)
- դ) (i) և (iv)

*(2 միավոր)*

*(Ընդամենը 20 միավոր)*

### Հարց 5.

«Գաստրոնոմ» ՍՊԸ 31.12.2025թ. ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները հետևյալն են եղել.

Շահույթ/վնասի հաշվետվություն

Հազար դրամ	
Հասույթ	14,964
Վաճառքի ինքնարժեք	(8,818)
ՀՇ	6,146
Գործառնական ծախսեր	(2,958)
Ֆինանսական ծախսեր	(520)
Ներդրումային եկամուտ	240
Այլ եկամուտ	250
Շահույթ մինչ հարկումը	3,158
Շահութահարկ	(1,040)
ԶՇ	2,118

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	31.12.2025	31.12.2024
Հիմնական միջոցներ	4,688	3,816
Սկզբնական արժեք	7,136	6,040
Կուտակված մաշվածություն	2,448	2,224
Ներդրումներ	1,380	-
Պաշարներ	2,092	1,570
Դեբիտորական պարտքեր	1,870	1,648
Արագ իրացվելի ներդրումներ	240	100
Դրամական միջոցներ	-	244
	<b>10,270</b>	<b>7,378</b>
Կանոնադրական կապիտալ՝ 1բ/տ 1 դրամ անվանական արժեքով	2,800	2,000
Էմիսիոն եկամուտ	920	120
Վերաչափումից պահուստ	180	80
Կուտակված շահույթ	2,142	384
Սկզբնական մնացորդ	384	294
Տարվա շահույթ	2,118	130
Վճարված շահաբաժիններ	(360)	(40)
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Հետաձգված հարկային պարտավորություն	878	800
Պետական շնորհներ	550	400
8% փոխարկելի պարտատուներ	-	800

Ընթացիկ պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	1,288	1,520
Հաշվեգրված տոկոս	80	50
Ընթացիկ պահուստներ	-	240
Շահութահարկի գծով պարտավորություն	960	734
Պետական շնորհներ	200	250
Բանկային օվերդրաֆտ	272	-
	<b>10,270</b>	<b>7,378</b>

Առկա է հետևյալ լրացուցիչ տեղեկատվությունը.

1. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	31.12.2025			31.12.2024		
	Սկզբնական արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք	Սկզբնական արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
Հող և շենք	4,000	1,520	2,480	3,600	1,360	2,240
Սարքավորումներ	3,136	928	2,208	2,440	864	1,576
	<b>7,136</b>	<b>2,448</b>	<b>4,688</b>	<b>6,040</b>	<b>2,224</b>	<b>3,816</b>

01.01.2025թ. Գաստրոնոմը արձանագրեց հողի արժեքի աճ 300,000 դրամով: Տարվա ընթացքում վաճառվեց սարքավորում, որի սկզբնական արժեքը 1,000,000 դրամ էր, իսկ կուտակված մաշվածությունը 488,000 դրամ՝ հանգեցնելով 172,000 դրամ վնասի:

2. Պետական շնորհներ

Այլ եկամուտը իրենից ներկայացնում է պետական շնորհների գծով եկամուտը:

3. Սեփական կապիտալ և պարտատոմսեր

Կանոնադրական կապիտալի աճը պայմանավորված է հետևյալով.

- 01.01.2025թ. տեղի ունեցավ արտոնյալ թողարկում վերաչափումից պահուստի հաշվին՝ 1բ/տ յուրաքանչյուր 10ի դիմաց
- 01.04.2025թ 8% փոխարկելի պ/տ սեփականատերերը իրագործեցին իրենց իրավունքը և փոխարկեցին բաժնետոմսերի: Փոխարկման պայմանները հետևյալն էին՝ 25բ/տ 1 դրամ անվանական արժեքով յուրաքանչյուր 100 դրամ պարտատոմսի դիմաց:
- Կանոնադրական կապիտալում մնացած աճը պայմանավորված էր շուկայական գնով թողարկմամբ, որի դիմաց ստացվեց ամբողջական վճարում: Թողարկումը տեղի ունեցավ 30.04.2025թ

4. Ընթացիկ պահուստներ

2025թ. օգոստոսին «Գաստրոնոմ» ՍՊԸ-ն ստիված եղավ վճարել իր հաճախորդներից մեկին դատական վճռի արդյունքում: Դատական գործընթացը տևեց 2 տարի և «Գաստրոնոմ» ՍՊԸ-ն ակնկալվող պարտավորությունը պահուստավորել էր նախկին տարիների ընթացքում:

Պահանջվում է.

Պատրաստվել դրամական միջոցների մասին հաշվեկշիռային 31.12.2025թ. ավարտվող տարվա համար անուղղակի մեթոդով:

(Ընդամենը 20 միավոր)